ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/124

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.08.2018թ. թիվ 02/26-3/14574-18 գրությամբ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 09.08.2018թ. թիվ 025/001 գրության հիման վրա, 10.08.2018թ. թիվ 02/26-3/14574-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ին (այսուհետ՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/124 ընթացակարգի շրջանակներում 17.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ գնահատող հանձնաժողովն անհիմն է մերժել Ընկերության հայտը, քանի որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել է շտկված տեխնիկական բնութագիրը, որը համապատասխանում է հրավերի պահանջներին:

3. **<u>ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.08.2018թ. թիվ 025/001 գրությամբ հայտնել է, որ «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակից «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն տրվել է մեկ աշխատանքային օր՝ շտկելու անհամապատասխանությունը, սակայն չի շտկվել: Համաձայն վերոնշյալ որոշման 42-րդ կետի՝ մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերության կողմից շտկված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/124 ընթացակարգի շրջանակներում 17.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/124 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 8-րդ, 22-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների համար նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր քանակը
1	15531000	Կարագ	Կարագ Սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ ոչ պակաս քան 82.9% , խոնավությունը ոչ ավելի քան 16% , պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ	կգ	40
5	15111120	Տավարի միս տեղական	Միս տավարի թարմ կամպաղեցրած,ոսկորիևմսիհարաբերակցություն՝համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 040C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ, որով	կգ	50

			վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի ՄՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N85-Ն հրամանի պայմաններին		
8	15831000	Շաքարավազ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը 99.75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված),խոնավության զանգվածային մասը՝0.14%-ից ոչ ավելի, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0.0003 %-ից ոչ ավելի, ԳՕՍ 21-94 կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	280
22	15331153	Ոսպ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի, ԳՕՍ 16730-71: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	115
37	03211200	Եգիպտացորեն /պահածոյացված/	1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը ՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7 , սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:	հատ	30
38	15331490	Վարունգի մարինադ	1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ,մաղդանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը՝ սպիտակուցներ 0, ածխաջրեր ոչ ավելի քան 3գր,	հատ	30

			սպիտակուցներ 0, կալորիականությունը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների		
39	15100000	Քյուֆթա	Բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:	կգ	50

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-39-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 8-րդ, 22-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է, և 02.08.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

5. «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է Ընթացակարգի տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար և

մերժվել այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2018թ. թիվ 02/26-3/14574-18 գրությունը, ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 09.08.2018թ. թիվ 025/001 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը

հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանութ-յուն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 8-րդ, 22-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

հրավերով նախատեսված չափաբ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝	անվանումը և ապրանքային նշանը**	Տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր քանակը

ապնի համար ը	ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)				
1	15531000	Կարագ	Կարագ Սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ ոչ պակաս քան 82.9% , խոնավությունը ոչ ավելի քան 16% , պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ	կգ	40
5	15111120	Տավարի միս տեղական	Միս տավարի թարմ կամպաղեցրած,ոսկորիևմսիհարաբերակցություն՝համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ ,պահված 040C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ, որով վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N85-Ն հրամանի պայմաններին	կգ	50
8	15831000	Շաքարավազ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը 99.75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված),խոնավության զանգվածային մասը՝0.14%-ից ոչ ավելի, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0.0003 %-ից ոչ ավելի, ԳՕՍՏ 21-94 կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության	կգ	280

			մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի		
22	15331153	Ոսպ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի, ԳOUS 16730-71: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	115
37	03211200	Եգիպտացորեն /պահածոյացված/	1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7 , սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:	հատ	30
38	15331490	Վարունգի մարինադ	1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ,մաղդանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը՝ սպիտակուցներ 0, ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0, կալորիականությունը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների	հատ	30
39	15100000	Քյուֆթա	Բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:	կգ	50

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի 1-39-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հայտի N 6.1 հավելվածով 1-ին, 5-րդ, 8-րդ, 22-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Չափաբաժնի համար	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
1	կարագ	Կարագ սերուցքային ավանդական	ՄՈԼՊՐՈՄՍ ԵՐ ՍՊԸ	ՀՀ	Սերուցքային, 71.5-82.5% յուղայնությամբ, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0.7 գրամ, ածխաջուր 0.7 գրամ, 740 կկալ, ԳՕՍՏ3791: Անվտանգություն ըստ N2III4.9012010 հիգենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
5	Տավարի միս տեղական		տեղական	ՀՀ	Միս տավարի թարմ կամպաղեցրած, ոսկորի և մսի հարաբերակցություն՝ համապատասխանաբար 50-50% մսեղիք, զարգացած մկաններով, պահված 6 ժամից ոչ ավելի: Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 040C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ որով վկայում է

					սպանդանոցի մսի իսկությունը:
8	Շաքարավազ			ՌԴ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը 99.75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0.14%-ից ոչ ավելի, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0.0003 %-ից ոչ ավելի, ԳՕՍ 21-94 կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի.
22	Ոսպ	ՈՍՊ	ՕՕՕ «Торговый дом ярмарка»	ՌԴ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի, ԳՕՍ 16730-71: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.
37	Եգիպտացորեն /պահածոյացված/			ՀՀ	1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7, սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:
38	Վարունգի մարինադ	Վարունգի մարինադ	ԱՐԹՖՈՒԴ ՍՊԸ	ՀՀ	1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ, մաղադանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը ՝ սպիտակուցներ 0 , ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0, կալորիականությունը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների
39	Քյուֆթա		տեղական	ՀՀ	Բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 8-րդ, 22-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին, մասնավորապես.

ա. Հրավերով 1-ին չափաբաժնի (կարագ) տեխնիկական բնութագրում կաթնայուղը սահմանված է ոչ պակաս քան 82.9%, իսկ Ընկերության կողմից ներկայացված հայտի հավելված 6.1 ապրանքի տեխնիկական բնութագրով յուղայնությունը նշված է 71.5 - 82.5%.

բ. Հրավերով Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի (տավարի միս) տեխնիկական բնութագրով ոսկոր և միս հարաբերակցությունը սահմանված է 70-80% մսեղիկ, իսկ Ընկերության կողմից ներկայացված հայտի հավելված 6.1-ով ապրանքի տեխնիկական բնութագրով մսեղիքը՝ 50% է.

գ. Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով (շաքարավազ) Ընկերության կողմից ներկայացված հայտի հավելված 6.1-ով ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը.

դ. Հրավերով Ընթացակարգի 22-րդ չափաբաժնի (ոսպ) տեխնիկական բնութագրով սահմանված է դեղին կամ կանաչ գույնի, իսկ Ընկերության կողմից ներկայացված հայտի հավելված 6.1 ապրանքի տեխնիկական բնութագրով ներկայացված է դեղին կամ կանաչ գույնի, ընդ որում Ընկերությունը պետք է ներկայացնի հրավերի հավելված 6.1-ով առաջարկվող ապրանքի կոնկրետ բնութագիր:

ե. Ընթացակարգի 37-րդ չափաբաժնի մասով (եգիպտացորեն պահածոյացված) Ընկերության կողմից ներկայացված հայտի հավելված 6.1-ով ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ.

զ. Ընթացակարգի 38-րդ չափաբաժնով (վարունգի մարինադ) Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

է. Ընթացակարգի 39-րդ չափաբաժնով (քյուֆթա) Ընկերության կողմից ներկայացված հայտի հավելված 6.1-ով ներկայացված չէ ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի բնութագրում առաջարկվող ապրանքը, նշված չէ ապրանքի բնութագրի կոնկրետ չափ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և 02.08.2018թ. Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

«Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 8-րդ, 22-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի հետևյալ շտկված տարբերակները.

Չափաբաժնի համար	անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
1	կարագ	«ԷՔՍՏՐԱ»	ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՌՏՆԵՐ ՍՊԸ	Ուկրաինա	Կարագ Սերուցքային, բաղադրությունը կաթնայուղ ոչ պակաս քան 82.9%, խոնավությունը ոչ ավելի քան 16% , պինդ ոչ յուղային բաղադրիչներ ոչ ավելի քան 1.4%, 100 գրամում 3090ԿՋ
5	Տավարի միս տեղական		տեղական	<<	Միս տավարի թարմ կամպաղեցրած, ոսկորի և մսի հարաբերակցություն՝ համապատասխանաբար 70-80% մսեղիք, զարգացած մկաններով, Պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, պահված 040C ջերմաստիճանի պայմաններում, I պարարտության: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» << օրենքի 9-րդ հոդված մատակարարված ապրանքի համար ներկայացնել փասթաթուղթ որով վկայում է սպանդանոցի մսի իսկությունը: Բավարարի

					ՄՆՆԴԱՄԹԵՐՔ ՏԵՂԱՓՈԽՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 մարտի 2017 թվականի N85-Ն հրամանի պայմաններին
8	Շաքարավազ	Շաքարավազ	ԱԳՐՈԿՈՄՊԼԵՔՍ	ՌԴ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը 99.75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված),խոնավության զանգվածային մասը՝0.14%-ից ոչ ավելի, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0.0003 %-ից ոչ ավելի, ԳՕՍ 21-94 կամ համարժեքը: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի
22	Ոսպ	ՈՍՊ	«Ասնուշ լինի» ՍՊԸ	ՀՀ	Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի, ԳՕՍ 16730-71: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի
37	Եգիպտացորեն /պահածոյացված/	Տոպ Սան	ՁՊՍ «Ջամար», Արաս ֆուդ ՍՊԸ	Լեհաստան	1000 գր տարաներով, 100 գր սննդային արժեքը՝ ճարպեր ոչ ավելի քան 0,7, սպիտակուցներ ոչ ավելի քան 2,9 գր, կալորիականությունը առնվազն 57 կկալ, առանց կոնսերվատների: Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս:
38	Վարունգի մարինադ	Վարունգի մարինադ	«ԱՐԹՖՈՒԴ» ՍՊԸ	ՀՀ	1000 գր տարաներով, բաղադրությունը վարունգ, սխտոր, ծովաբողկ, մաղադանոս, սամիթ, քացախաթթու, աղ, 100 գր սննդային արժեքը՝ սպիտակուցներ 0 , ածխաջրեր ոչ ավելի քան 3գր, սպիտակուցներ 0, կալորիականությունը ոչ պակաս քան 125 կկալ, Պիտանելիության ժամկետը ոչ ավելի քան 24 ամիս, առանց կոնսերվատների
39	Քյուֆթա		«Մուշ» ՍՊԸ	ՀՀ	Բաղադրությունը տավարի միս, սպիտակուցներ ոչ ավելի քան 12 գր, ճարպեր ոչ ավելի քան 15 գր: Պահպանման ճամկետները ոչ ավելի քան 15 օր: Մատակարարման ժամանակ պահպանման ժամկետի մնացորդ ոչ պակաս քան 7 օր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.08.2018թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ի հայտը 1-ին, 5-րդ, 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժիններով գնահատվել է անբավարար և մերժվել այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին, մասնավորապես նշված չափաբաժիններով շտկված չեն անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով հաստատված տեխնիկական բնութագիրը, Ընկերության կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները, արձանագրում եմ, որ 1-ին (կարագ), 5-րդ (տավարի միս), 37-րդ (եգիպտացորեն պահածոյացված), 38-րդ (վարունգի մարինադ) և 39-րդ (քյուֆթա) չափաբաժինների մասով Ընկերության կողմից որպես շտկված ներկայացված տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին: Մասնավորապես՝ 1-ին (կարագ) չափաբաժնի մասով շտկված տեխնիկական բնութագրում կաթնայուղի տոկոսայնությունը նշվել է հրավերով պահանջվող ոչ պակաս քան 82.9 %, 5-րդ (տավարի միս) չափաբաժնի մասով մսեղիքի տոկոսայնությունը նշվել է հրավերով պահանջվող 70-80 %, 37-րդ (եգիպտացորեն /պահածոյացված/) չափաբաժնի մասով նշվել է ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, ինչպես նաև հրավերով պահանջվող ապրանքի ամբողջական նկարագրությունը, 38-րդ (վարունգի մարինադ) և 39-րդ չափաբաժինների (քյուֆթա) մասով տեխնիկական բնութագրերը նույնպես ներկայացվել են հրավերի տեխնիկական բնութագրերին համապատասխան: Ինչ վերաբերում է 37-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերի կոնկրետ չափը սահմանելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նկատառմանը, ապա գտնում եմ, որ նման պահանջն անհասկանալի է և եթե նույնիսկ գնահատող հանձնաժողովը նկատի է ունեցել առաջարկվող ապրանքի չափը, ապա Ընթացակարգի հրավերի տեխնիկական

բնութագիր-գնման ժամանակացույցով արդեն իսկ սահմանված է գնման ենթակա ապրանքների կոնկրետ չափերը, որոնք ենթակա է մատակարարման Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքվելու դեպքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին, հետևաբար «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ն «ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.08.2018թ. թիվ 02/26-3/14574-18 գրությամբ՝ «Սամիկ և Վարդան» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04214378) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**